



*Կալիֆորնիայի՝ Պաշտպանության և փաստաբանության համակարգ
Դուք կարող եք անվճար զանգահարել՝ (800) 776-5746*

Անհատականացված ծրագրային պլան (ԱԾՊ) Պլանավորման ուղեցույց

ապրիլ 2016թ., Հր. #5038.10

**Տարածքային կենտրոնների ծառայություններից օգտվող
անձանց համար բուկլետ**

Capitol People First and Disability Rights California

Սոցիալական աջակցության ծրագիր, 1994թ.

իմբազրված 1998, 2003, 2010, 2016

Լանթերմանի օրենք

Կալիֆոռնիայում զարգացման խանգարումներ ունեցող մարդիկ ունեն իրավունք օգտվելու այնպիսի ծառայություններից, որոնք կօգնեն նրանց դառնալ իրենց համայնքների մի մասը, և օրենքն ասում է, որ տարածքային կենտրոններից օգտվող անձինք ունեն իրավունք կայացնելու որոշում ծառայությունների և աջակցության ձևերի վերաբերյալ, որոնց կարիքն ունեն, ներառյալ՝ սակայն չսահմանափակվելով հետևյալի վերաբերյալ՝

- Որտեղ ապրել,
- Ում հետ ապրել,
- Որտեղ աշխատել կամ գնալ դպրոց,
- Ում հետ ընկերություն անել,
- Ինչպես զվարճանալ,
- Ինչ անել ապագայում,
- Ինչ ծառայություններ և աջակցության ձևեր եք դուք ցանկանում և կարիքը ունեք:

Տես նաև՝ «Լանթերմանի օրենքով սահմանված իրավունքները» հրապարակումը հետևյալ հղումով
<http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsRULAEnglish.htm>

Ո՞վքեր կարող են օգտվել ծառայություններից Լանթերմանի օրենքի շրջանակներում

Գոյություն ունի անձանց երեք խումբ, ովքեր կարող են օգտվել ծառայություններից Լանթերմանի օրենքի շրջանակներում: Նրանք են՝

1. անձինք, ովքեր ունեն զարգացման խանգարումներ ըստ Լանթերմանի օրենքի սահմանման՝ ներառյալ անձինք, ովքեր ունեն լուրջ սահմանափակումներ, որոնք առաջացել են ուղեղի կաթվածի,

Էպիլեպսիայի, աուտիզմի, մտավոր խանգարումների և մտավոր խանգարումների հետ սերտ կապված կամ նմանատիպ բուժում պահանջող պայմանների հետևանքով.

2. անձինք, ովքեր գտնվում են զարգացման խանգարումներով երեխա ունենալու վտանգի առջև.
3. նորածիններն ու մինչև երեք տարեկան երեխաները, ովքեր կանգնած են զարգացման խնդիրներ ունենալու մեծ վտանգի առջև:

Ի՞նչ է իրենից ներկայացնում Անհատական ծրագրային պլանը (ԱԾՊ)

ԱԾՊ-ն գործողությունների ծրագիր է, որտեղ խոսվում է այն աջակցության մասին, որը ձեզ անհրաժեշտ է ապրելու համար այնպես, ինչպես ցանկանում եք:

ԱԾՊ-ում նշվում են ձեր նպատակները, ծառայությունները և աջակցության ձևերը, որպեսզի դուք կարողանաք լինել ավելի անկախ և մասնակցություն ունենաք համայնքում:

ԱԾՊ-ն գրավոր համաձայնագիր և պայմանագիր է ձեր և Տարածքային կենտրոնի միջև: Այն գրված է ձեզ հասկանալի ձևով:

ԱԾՊ-ի ժամանակացույց

Օրենքն ասում է, որ մարդիկ պետք է ԱԾՊ հանդիպում ունենան առվազն **3 տարին** մեկ անգամ: Որոշ մարդիկ ԱԾՊ իրականացնում յուրաքանչյուր տարի: Դուք ցանկացած ժամանակ կարող եք պահանջել ԱԾՊ հանդիպում: Չանգահարեք ձեր տարածքային կենտրոնի ծառայության համակարգողին ԱԾՊ հանդիպում նշանակելու համար:

ԱԾՊ հանդիպումը պետք է տեղի ունենա հանդիպումը պահանջելուց հետո **30 օրվա** ընթացքում:

Էջ 4՝ 20-ից

Եթե որևէ հարցով (հարցերով) վերջնական որոշում չի կարող կայացվել, ապա դուք կարող եք պլանավորել մեկ այլ հանդիպում **15 օրվա** ընթացքում կամ բողոք ներկայացնել:

Եթե տարածքային կենտրոնը ասում է «ՈՉ» ցանկացած նոր ծառայությունից օգտվելու պահանջին, ապա օրենքն ասում է, որ դուք պետք է ստանաք մերժման մասին գրավոր ծանուցում ձեր նախընտրած լեզվով **5 օրվա** ընթացքում:

Եթե Տարածքային կենտրոնն ասում է, որ ցանկանում է փոխել կամ դադարեցնել ծառայությունը, որ արդեն ստանում եք, և դուք համաձայն չեք, ապա պետք է գրավոր ծանուցում ներկայացնեք ձեր նախընտրած լեզվով ծառայությունը փոխելուց կամ դադարեցնելուց **30 օր** առաջ: Ծանուցումը պետք է ներառի բողոքարկման ձևը, որը դուք կարող եք լրացնել բողոքարկման դեպքում:

Ինչու՞ է կարևոր Ձեր ԱԾՊ հանդիպումը

ԱԾՊ հանդիպումը միակ ժամանակն է, որտեղ կարող են պաշտոնապես խոսել և գրել ձեր ԱԾՊ-ի մասին: Եթե ձեր տարածքային կենտրոնը հորդորում է ձեզ փոխել ձեր ծառայությունները, ապա ասեք նրանց, որ դուք ցանկանում եք խոսել դրա մասին ԱԾՊ հանդիպման ժամանակ:

Ձեր իրավունքները ԱԾՊ հանդիպմանը

- Դուք ունեք ԱԾՊ-ն գրավոր ստանալու իրավունք, որտեղ նշված կլինեն ձեր հետագա նպատակները և այն ծառայությունները, որոնք դուք ցանկանում եք ստանալ կամ ունեք դրանց կարիքը:
- Դուք իրավունք ունեք ստանալու այնպիսի ծառայություններ, որոնք կազմում են ձեր համայնքի մասը ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված վայրերում կամ խմբերում,
- Դուք ունեք ձեր ԱԾՊ-ն կազմելու հարցում օգնություն ստանալ իրավունք:

Էջ 5՝ 20-ից

- Դուք ունեք իրավունք չհամաձայնել ձեր ԱԾՊ-ում ընդգրկված ծառայություններում կատարված ցանկացած փոփոխության հետ, նույնիսկ եթե հանդիպումը տեղի չի ունեցել ձեր մասնակցությամբ:
- Դուք ունեք թարգմանչի կամ ֆասիլիտատորի (օգնողի) իրավունք, եթե դրա կարիքն ունեք, և տարածքային կենտրոնը պետք է ապահովի այն ձեզ համար:
- Դուք ունեք իրավունք գտնվել ձեր ԱԾՊ հանդիպմանը և ասել մարդկանց, թե ինչ ծառայությունների կարիք և ցանկություն ունեք:
- Դուք ունեք իրավունք ձեր ԱԾՊ հանդիպումը կազմակերպել այնտեղ, որտեղ նպատակահարմար էք համարում: Տարածքային կենտրոնը չի կարող փոխել ձեր ծառայությունները կամ գրել ձեր ԱԾՊ-ն առանց ձեր՝ ԱԾՊ հանդիպմանը մասնակցության:
- Դուք ունեք իրավունք ստանալ փաստաթղթերը՝ ԱԾՊ-ները, գնահատման պլանները, ԱԾՊ իրավունքները, բողոքարկման իրավունքները և գործողությունների ծանուցումները ձեր մայրենի լեզվով:
- Դուք ունեք իրավունք ստանալ ծառայությունները և աջակցությունը ամենաքիչ սահմանափակող միջավայրում:

Տարածքային կենտրոնը և գործակալությունները, որոնք ձեզ տրամադրում են ծառայություններ, ինչպիսիք են խմբով բնակվելու կացարանները կամ խմբակային ծրագրերը, պետք է թույլ տան ձեզ կայացնել ձեր սեփական որոշումները:

Նրանք պետք է ձեզ տրամադրեն կարևոր տեղեկություններ, որոնց անհրաժեշտությունը դուք ունեք որոշումները ձեզ հասկանալի ձևով կայացնելու համար:

Ուլքե՞ր են ԱԾՊ թիմի կազմում

- Դուք ամենակարևոր անդամներն էք:
- Ծնողները և օրինական խնամակալները:

Էջ 6՝ 20-ից

- Ձեզ ճանաչող և ձեր մասին հոգ տանող մարդիկ:
- Ձեր ծառայությունները համակարգողը Տարածքային կենտրոնից, ով կարող է ձեռք բերել ձեր համար այն ծառայությունները, որոնք դուք ցանկանում եք կամ որոնց կարիքը ունեք:
- Բազմապրոֆիլ թիմը, անհրաժեշտության դեպքում:
- Ցանկացած մեկը, ում անհրաժեշտ էք համարում:

Ի՞նչ անել ԱԾՊ հանդիպումից առաջ

- Մտածե՛ք ապագայում ձեր նպատակների մասին: Մտածեք՝ ինչ է ձեզ անհրաժեշտ համայնքում առողջ ու անվտանգ ապրելու համար: Արդյո՞ք կա որևէ նոր բան, որ ցանկանում եք անել:
- Վերանայե՛ք ձեր հին ԱԾՊ-ն և տեսեք՝ արդյոք այն արդյունավետ է թե ոչ: Խնդրեք ընկերներից կամ ընտանիքի անդամներից որևէ մեկի օգնությունը: Արդյո՞ք կա որևէ բան, որ ցանկանում եք այլ կերպ անել:
- Թվարկե՛ք ձեր մտահոգությունները և նպատակները:
- Թվարկե՛ք ծառայությունները և աջակցության ձևերը, որը ձեր կարծիքով կօգնի ձեզ հասնել ձեր նպատակներին:
- Խոսե՛ք ձեզ վստահելի անձանց հետ ինչի մասին ցանկանում եք ասել ձեր հանդիպման ժամանակ: Ապա գրեք կամ խնդրեք ընկերներից կամ ընտանիքի անդամներից որևէ մեկին օգնել ձեզ:
- Չայնագրիչով ձայնագրե՛ք այն, ինչ ցանկանում եք ասել և բերեք այն ձեր հանդիպման ժամանակ:
- Պարապե՛ք արտահայտվել: Դուք ավելի լավ գիտեք, թե ինչ եք ցանկանում և ինչի կարիք ունեք:
- Մա շատ կարևոր հանդիպում է: Նախապատրաստվե՛ք: Բաց մի թողեք այն:

Այս բուկլետի վերջում ԱԾՊ հանդիպման պլանավորման սխեման կարող է ձեզ օգնել ձեր հանդիպմանը նախապատրաստվելու համար:

Նաև տես՝ «Ձեր կամ ձեր երեխայի համար տարածքային կենտրոնից որակյալ ծառայություններ ստանալու 16 խորհուրդ» հրապարակումը հետևյալ հղումով՝ <http://www.disabilityrightsca.org//pubs/541301.pdf>

Ի՞նչ անել ԱԾՊ հանդիպման ժամանակ

- Խոսե՛ք ձեր թիմի հետ ձեր ցանկությունների և կարիքների մասին:
- Տույց տվե՛ք, թե ինչ եք գրել (կամ ձայնագրել) ծրագրերի և ծառայությունների մասին, որոնք ցանկանում եք ստանալ:
- Եղե՛ք քաղաքավարի և հաստատակամ:
- Դուք կարող եք խնդրել ձեզ տրամադրել ծառայության այլ համակարգող և կարող եք խնդրել փոխել ձեզ տրամադրվող ծառայությունները, եթե անհրաժեշտ է:
- Ձեր հանդիպմանը պետք է ներկա լինի այնպիսի անձ, ով կարող է ասել «այո» կամ «ոչ» ձեր ԱԾՊ-ում գրվածների կապակցությամբ: Նա կարող է լինել ձեր ծառայություններ համակարգողը կամ տարածքային կենտրոնի այլ աշխատակից:
- Հարցրե՛ք, արդյոք կան որևէ նոր գնահատումներ, հաշվետվություններ կան դիտարկումներ:
- Խնդրե՛ք խոսել ձեր ուժեղ կողմերի, հետաքրքրությունների, զարգացման ոլորտների, կարիքների ոլորտների և ընկերության մասին:
- Հարցրե՛ք ցանկացած այլ հարցերի մասին, որոնք ունեք ձեր առաջընթացի կամ ծառայությունների մասին:
- Կիսվե՛ք ձեր ներկա և հետագա նպատակներով:
- Քննարկե՛ք ձեր ունեցած ցանկացած մտահոգություն:
- Կիսվե՛ք ցանկացած տնային պայմաններով, որոնք կարող են ազդել ձեր աշխատանքի կամ վարքագծի վրա դպրոցում կամ աշխատավայրում և ցանկացած թարմ փաստաթղթերով կամ տեղեկություններով:

Էջ 8՝ 20-ից

- Նշումներ կատարե՛ք առաջարկությունների և ժամանակացույցերի վերաբերյալ, ինչպիսիք են լրացուցիչ ծառայությունները կամ գնահատումները:
- Բարձրաձայն արտաբերե՛ք այն, ինչ հասկանում եք ձեր ընդունած որոշումների, քայլերի, ժամանակացույցների, ինչպես նաև հանդիպման ժամանակ յուրաքանչյուր անձի դերի և պարտականությունների մասին:
- Ձեր կարծիքը հայտնե՛ք այն անձանց, ովքեր աշխատում են ձեր հետ այնպիսի ոլորտներում, որտեղ նկատել եք դրական ջանք, աճ կամ փոփոխություն:

Եթե անձը, ով կարող է հաստատել ձեր ԱԾՊ-ի ծառայությունները, հանդիպմանը ներկա չի գտնվում, ապա Տարածքային կենտրոնը պետք է կազմակերպի մեկ այլ ԱԾՊ հանդիպում 15 օրվա ընթացքում: Տարածքային կենտրոնի աշխատակիցը, ով հաստատում է ծառայությունները, պետք է ներկա լինի:

Ձեր ԱԾՊ-ում նշված ծառայությունները և աջակցությունը ստանալու իրավունքները

Լանթերմանի օրենքն ասում է, որ ձեր ծառայությունները և աջակցությունը պետք է օգնի ձեզ լինել ձեր համայնքի անկախ, օգտակար անդամ և ապրեք այնպիսի վայրերում, որտեղ դուք ապահով եք և առողջ:

Այստեղ ներկայացված են որոշակի ծառայություններ և աջակցության ձևեր, որոնք տարածքային կենտրոնը կարող է օգնել ձեզ գտնել և ստանալ:

- Դպրոց ընդունվելու կամ վերապատրաստման ծրագրում ընդգրկվելու հարցում աջակցություն:
- Հարմարվողական սարքավորում. եթե ձեզ հարկարվոր են իրեր, որոնք կարող են օգնել ձեզ դառնալ ավելի անկախ, ինչպես օրինակ՝ անվասայլակը կամ խոսող համակարգիչը:

Տես՝ «Տարածքային կենտրոնի միջոցով օժանդակ տեխնոլոգիայի ֆինանսավորում» հրապարակումը հետևյալ հղումով՝
<http://www.disabilityrightsca.org//pubs/557901.pdf>

- Իրավունքների պաշտպանության ոլորտում ուսուցում. եթե ձեզ անհրաժեշտ է իմանալ ավելին ձեր իրավունքների մասին ձեր կարծիքն արտահայտելու համար:
Տես՝ Ջարգացման ծառայությունների ոլորտում հաճախորդների իրավունքների պաշտպանության հարցերով հանձնաժողովի հրապարակումները հետևյալ հղումով՝
<http://www.dds.ca.gov/ConsumerCorner/Publications.cfm>
- Փոխադրման ծառայություններ և/կամ ուսուցում ավտոբուսներից և տրանսպորտային այլ միջոցներից օգտվելու հարցում:
- Ճգնաժամային ծառայություններ. եթե ձեզ անհրաժեշտ է պլան արտակարգ իրավիճակների դեպքում:
- Ծնողների ուսուցում. եթե ունեք երեխաներ և ձեզ անհրաժեշտ է իմանալ ավելին նրանց խնամելու մասին:
- Սեռական բնույթի հարցեր. եթե ունեք սեռական բնույթի հարցեր և հարաբերությունների հարցում աջակցություն:
- Աշխատանք ստանալու հարցում աջակցություն՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և փոքր բիզնեսի ստեղծելու հարցում աջակցություն:
- Կենցաղային պայմաններ. Աջակցություն տուն ընտրելու կամ տեղափոխվելու, սենյակակիցներին ընտրելու, կահավորելու, ընդհանուր առօրյա կենցաղային աշխատանքներում և արտակարգ իրավիճակներում, համայնքի կյանքում մասնակցելու և անձնական ֆինանսական հարցերը կարգավորելու հարցում, որպեսզի դուք կարողանաք լինել ավելի անկախ:
- Ֆասիլիտատոր, որը կօգնի ձեզ, եթե ցանկանում են լինել հանձնաժողովի կամ տնօրենների խորհրդի անդամ:

Տես՝ «Զարգացման ծառայությունների ոլորտում հաճախորդների իրավունքների պաշտպանության հարցերով հանձնաժողովի կողմից օժանդակումը» բուկլետը հետևյալ հղումով՝
<http://www.dds.ca.gov/ConsumerCorner/docs/FacilitationBooklet.pdf>

- Ձեր համայնքում տեղի ունեցող զվարճալի իրադարձություններում ներգրավվելու աջակցություն: Տես՝ «Համայնքային գործողությունները պլանավորելու համար ձեր ԱԾՊ-ի կիրառումը» հետևյալ հղումով՝
<http://www.disabilityrightsca.org/pubs/506301SuppK.pdf>
- Այլ ծառայություններ, որոնք ձեզ անհրաժեշտ են ավելի լավ կյանք վարելու համար: Սա յուրաքանչյուր անձի համար կարող է տարբեր լինել:

Տես՝ ավելի ընդգրկուն ցանկ հետևյալ հղումով՝
<http://www.disabilityrightsca.org//pubs/506301SuppC.pdf>

Հիշե՛ք. Նորմալ է խնդրել այնպիսի բաներ, որոնք ձեզ անհրաժեշտ են, սակայն չկան ցանկում:

Գրե՛ք այն ծառայությունները և աջակցության ձևերը, որոնք ձեզ անհրաժեշտ են ձեր ԱԾՊ-ում ձեր ԱԾՊ թիմի օժանդակությամբ:

Առավել տեղեկությունների համար, թե ինչպես ԱԾՊ-ի միջոցով ստանալ ծառայություններ՝ ներառյալ տիպային նամակների և պլանավորման սխեմաների մասին, տես՝

<http://www.disabilityrightsca.org/pubs/506301SuppI.pdf>

Կողմնորոշման ծրագիր

Տարածքային կենտրոնի կողմից վճարովի ծառայություններ ստանալու մեկ այլ եղանակը Կողմնորոշման ծրագիրն է: Կողմնորոշման ծրագիրը թույլ կտա ձեզ ավել մեծ հսկողություն ունենալ ձեր ծառայությունները և աջակցության ձևերը ընտրելու հարցում: Դուք կստանաք որոշակի բյուջե

յուրաքանչյուր տարի ծառայություններ և աջակցություն ձեռք բերելու նպատակով, որոնք ձեզ անհրաժեշտ են ձեր պլանը ձեզ համար ավելի արդյունավետ դարձնելու համար: Դուք կարող եք ընտրել ձեր ծառայությունները և ընտրել, ովքեր կտրամադրեն այդ ծառայությունները: Դուք եք պատասխանատու ձեր բյուջեի սահմանները չանցնելու համար: Պարտադիր չէ, որ դուք միանաք Կողմնորոշման ծրագրին, դա ձեր ընտրությունն է:

Տես՝ Կողմնորոշման ծրագիրը հրապարակումը հետևյալ հղումով՝
<http://www.disabilityrightsca.org/pubs/F07701.pdf>

Ի՞նչ անել, եթե ոչ ոք ձեզ չի լսում

Դուք պետք է ձեր խոսքն ունենաք ձեզ մատուցվող ծառայությունների և ձեզ տրամադրվող աջակցության մասով: Եթե մարդիկ ձեզ չեն լսում, ապա ասեք այդ մասին որևէ ընկերոջ, բարեկամի, ձեր ծառայությունները համակարգողին, սպառողների իրավունքների ձեր պաշտպանին կամ Ջարգացման խանգարումներ ունեցող անձանց հարցերով նահանգային խորհրդի տարածքային գրասենյակից որևէ մեկին: Ջարգացման խանգարումներ ունեցող անձանց հարցերով նահանգային խորհրդի տարածքային գրասենյակների ցանկը տե՛ս

<http://www.disabilityrightsca.org/pubs/506301SuppAA.pdf>

Ձեր ԱԾՊ-ն պայմանագիր է

Օրենքում ասվում է, որ ձեր ԱԾՊ-ն գրելիս տարածքային կենտրոնը պետք է պահպանի որոշակի կանոններ:

Դուք և տարածքային կենտրոնը պետք է համաձայնեք և ստորագրեք ԱԾՊ-ն նախքան ծառայություններն սկսելը կամ շարունակելը:

Ձեր իրավունքները ԱԾՊ-ն ստորագրելիս

Էջ 12՝ 20-ից

Դուք իրավունք ունեք վերանայելու և մտածելու ձեր ԱԾՊ-ի շուրջ նախքան այն ստորագրելը:

Ձեր ծառայությունները չեն կարող սկսվել, քանի դեռ դուք և տարածքային կենտրոնը չեք համաձայնել ձեր ԱԾՊ-ի բովանդակության շուրջ: Ձեր ԱԾՊ-ն ստորագրելիս դուք հաստատում եք, որ համաձայն եք ձեր ԱԾՊ-ի բովանդակության հետ:

Եթե համաձայն չեք ԱԾՊ-ի ամբողջ բովանդակության հետ, ապա պարտավոր չեք այն ստորագրել: ԲԱՅՑ կարող եք համաձայնել մասամբ: Գրավոր ներկայացրեք՝ ինչի հետ եք համաձայն, ինչի հետ՝ ոչ:

Եթե ձեր ԱԾՊ-ին համաձայն եք միայն մասամբ, ապա խնդրեք ձեր ծառայությունները համակարգողին ձևակերպել այն հետևյալ կերպ.

Ես համաձայն եմ իմ ԱԾՊ-ի այս մասերի հետ՝

- 1.
- 2.
- 3.

Խնդրում եմ անմիջապես սկսել (շարունակել) այն ծառայությունները, որոնց հետ համաձայն եմ:

Ես համաձայն չեմ իմ ԱԾՊ-ի այս մասերի հետ՝

- 1.
- 2.
- 3.

Դրանից հետո այն ծառայությունները, որոնց շուրջ դուք և տարածքային կենտրոնը համաձայնել եք, կարող են սկսվել:

ԱԾՊ-ի ձեր օրինակը

- Անպայման վերցրեք ԱՊԾ-ի ձեր օրինակը: Տարածքային կենտրոնը կարող է ձեր ԱԾՊ-ի օրինակն ուղարկել այն անձանց, ովքեր եկել էին ձեր ժողովին, եթե ցանկանում եք, որ նրանք օրինակ ունենան:
- Անցեք ԱԾՊ-ի վրայով այն մարդկանց հետ, ովքեր հոգ են տանում ձեր մասին: Համոզվեք, որ այն պարունակում է այն ամենը, ինչ ցանկանում եք:
- Եթե դա ձեր ԱԾՊ-ում ներառված է, ապա տարածքային կենտրոնը պետք է ձեռք բերի ծառայությունները կամ աջակցության ձևերը ձեզ համար:

Ձեր իրավունքները, եթե դուք համաձայն չեք ձեր ԱԾՊ-ի հետ:

Եթե տարածքային կենտրոնն ասում է «ՈՉ» այն ծառայություններին կամ աջակցության ձևերին, որոնք ցանկանում եք, ապա նրանք պետք է նամակ ուղարկեն **5 օրվա ընթացքում**՝ նշելով, թե ինչու են ասել «Ոչ» և ինչպես կարող ես բողոքարկել:

Եթե համաձայն չեք տարածքային կենտրոնի հետ ձեր ծառայությունների կապակցությամբ, որոնք ցանկանում եք ստանալ, ապա իրավունք ունեք **բողոքարկել** նրանց որոշումը: Եթե տարածքային կենտրոնը ուշացնում է կամ ձգձգում է որոշման կայացումը, ապա պնդեք, որ արագ որոշում կայացնի: Դուք կարող եք դիտարկել ուշացումը որպես մերժում և բողոք ներկայացնեք:

Բողոքարկում

Բողոքարկումը հեշտ չէ, սակայն տարածքային կենտրոնի որոշումը վիճարկելը ձեր իրավունքն է: Մենք բողոքարկման հետ կապված մանրամասները չենք քննարկի սույն ուղեցույցում: Բողոքների և բողոքարկումների մասին ավելին իմանալու համար տես՝ Լանթերմանի

օրենքով սահմանված իրավունքները, 12-րդ գլուխ, հետևյալ հղումով՝
<http://www.disabilityrightsca.org/pubs/506301Ch12.pdf>

Բողոքարկման և լսումների մասին ավելին իմանալու համար տես՝
<http://www.disabilityrightsca.org/pubs/548401.pdf>

Հիշե՛ք՝ սա ձեր կյանքն է:

Տարածքային կենտրոնը օգնում է ձեզ ստանալ այն կյանքը, որը ցանկանում եք: Սովորեք՝ ինչպես պաշտպանել ձեզ: Միացեք իրավունքների ինքնապաշտպանության խմբին կամ ստացեք իրավունքների ինքնապաշտպանության ոլորտում ուսուցում:

Օրենքն ասում է, որ դուք ունեք իրավունք անել ձեր կյանքի հետ կապված ընտրություններ և ստանալ ծառայությունները և աջակցության ձևեր, որոնք ձեզ անհրաժեշտ են ձեր համայնքի անդամ դառնալու համար: Եթե համաձայն չեք որոշման հետ, որը ազդում է ձեր կյանքի վրա, ապա արտահայտվեք:

Ստացե՛ք աջակցություն ձեր բողոքը ներկայացնելու հարցում:

Խոսե՛ք Զարգացման խանգարումներ ունեցող անձանց հարցերով նահանգային խորհրդի տարածքային գրասենյակի, ընտանիքի, ընկերների, աջակցության շրջանակների կամ իրավունքների ինքնապաշտպանության խմբի հետ աջակցություն ստանալու նպատակով:

Յուրաքանչյուր տարածքային կենտրոն ունի **Հաճախորդների իրավունքների պաշտպան**: Հարցրեք ձեր տարածքային կենտրոնից՝ ովքեր են նրանք և վերցրեք նրանց հեռախոսահամարները: Հաճախորդների իրավունքները պաշտպանը կարող է օգնել ձեզ:

Էջ 15` 20-ից

Հաճախորդների իրավունքների պաշտպանության գրասենյակ կարող էք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ **1-800-390-7032** կամ այցելել կայքէջ՝ <http://www.disabilityrightsca.org/about/OCRA.htm>

ԿԱՍ

Դուք կարող էք զանգահարել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների գրասենյակ, Կալիֆոռնիա՝ **1-800-776-5746**

Լրացուցիչ տեղեկությունների և հրապարակումների համար տես՝ www.disabilityrightsca.org

ԱԾՊ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԽԵՄԱ

Այս աշխատանքային թերթիկը կարող է օգնել ձեզ պլանավորել ձեր ԱԾՊ հանդիպումը: Օգտագործե՛ք այն ապագայի ձեր ցանկությունների մասին մտածելու համար:

ԱՊՐԵԼՈՒ ՎԱՅՐ

Որտե՞ղ ապրել

Մնալ, որտեղ կամ

Իմ ծնողների տանը

Իմ սեփական տանը

Որդեգրած ընտանիքի հետ (Չափահասների ըտանեկան տուն գործակալություն)

Խմբով բնակելու համար կացարանում

Ապրել օժանդակությամբ

Ապրել անկախ

Էջ 16` 20-ից

Իմ սեփական վայրում սենյակակիցների հետ

Այլ վայրում

Ի՞նչ ծառայություններ են ձեզ անհրաժեշտ, որոնք կօգնեն ձեզ ապրել այնտեղ, որտեղ ցանկանում եք

Ավելի խորը ուսուցում

Իմ գումարները կառավարելու հարցում օգնություն

Ուղեկցող կամ սենյակակից

Ապրելու վայր գտնելու հարցում օգնություն

Կանոնավոր աջակցություն և օգնություն ցուցաբերող անձ

Գնումների, խոհարարության և/կամ մաքրության հարցում օգնություն

Լինել ապահով

Այլ ծառայություններ

Աշխատելու վայր կամ դպրոց

Որտե՞ղ եք ցանկանում աշխատել կամ գնալ դպրոց

Մնալ այնտեղ, որտեղ որ այժմ եմ

Համայնքում

Արհեստանոցում կամ կենտրոնում

Ի՞նչ կարգի աշխատանքի կամ դպրոց եք ցանկանում գնալ

Վճարովի աշխատանք

Կամավորական աշխատանք, ինչ է ձեզ հետաքրքրում

Այլ տիպի աշխատանք

Էջ 17՝ 20-ից

Քոլեջ

Չափահասների համար ուսումնական դասընթացներ

Այլ տեսակի դպրոց

Ի՞նչ այլ ծառայությունն են ձեզ անհրաժեշտ, որոնք կօգնեն ձեզ աշխատել կամ գնալ դպրոց

Ինքնակենսագրականի թարմացում

Աշխատանքի համար դիմում

Աշխատանքի հարցում ուսուցում կամ աշխատավայրում օգնություն

Կնկնուսույց կամ գրառումներ կատարող

Արհեստանոցում վերապատրաստում

Այլ վերապատրաստում

Աշխատավայրի կամ դասարանի հասանելիություն

Փոխադրում

Այլ ծառայություններ և աջակցություն

Զվարճանք

Ի՞նչ եք ցանկանում անել ազատ ժամանակ

Այցելել ընկերներին

Կատարել վարժություններ

Կատարել գնումներ

Գնալ կինո կամ խաղալ

Կամավորական աշխատանք

Զբաղվել սպորտով

Երաժշտություն լսել/դիտել հեռուստատեսություն

Հոբբի

Ժամադրություն

Ինքնապաշտպանության խմբին կամ «People First»-ին անդամակցում

Էջ 18՝ 20-ից

Օգնել պաշտպանել այլ անձանց իրավունքները
Այլ գործունեություն

**Ի՞նչ ծառայություններ են ձեզ անհրաժեշտ, որոնք կօգնեն ձեզ անել այն,
ինչ ցանկանում եք**

Վերապատրաստում
Ուղեկցող
Ֆասիլիտատոր
Փոխադրում
Ընկերների շրջանակ
Այլ ծառայություններ և աջակցություն

ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

**Ի՞նչպիսի բժշկական կամ առողջապահական ծառայություններ են ձեզ
անհրաժեշտ**

Բժշկի ծառայություններ
Խորհրդատվություն
Ատամնաբույժի ծառայություններ
Մեռական դաստիարակություն (ապահով սեռական
հարաբերություններ, ծննդաբերության վերահսկելիություն)
Պահպանել կազմվածքը, անել վարժություններ կամ սննդակարգին
հետևել
Այլ առողջապահական ծառայություններ

**Ինչպիսի՞ այլ աջակցություն է ձեզ անհրաժեշտ առողջապահական և
բժշկական ծառայություններից օգտվելու համար**

Վերապատրաստում
Ուղեկցող

Էջ 19՝ 20-ից

Որևը մեկը, որին հնարավոր լինի ուղղել հարցերը
Փաստաբան կամ իրավաբան
Ֆասիլիտատոր
Այլ աջակցություն

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ այլ հարցերով աջակցության կարիք ունեք

Խոհարարություն
Փոխադրում
Գնումներ
Տան մաքրում
Ավելի շատ անձանց հետ հանդիպում/ընկերների ձեռք բերում կամ
ժամադրություն
Սեռական հարաբերությունների կամ անվտանգ սեռական
հարաբերությունների մասին գիտելիքների ձեռքբերում
Մարդկանց հետ ավելի լավ շփում
Ինքնապաշտպանություն և իմ իրավունքներն իմանալը
Սոցիալական անվտանգության, սոցիալական ապահովության ծրագրի
կամ այլ առավելությունների հետ կապված խնդիրներ
Ինքնապաշտպանություն
Հանձնաժողովներում կամ տնօրենների խորհրդում լինելը
Այլ աջակցություն

Ի՞նչ այլ ծառայությունների հարցում աջակցության կարիք ունեք

Վերապատրաստում
Ուղեկցող
Որևը մեկը, որին հնարավոր լինի ուղղել հարցերը
Ընկերների շրջանակ ձևավորելու հարցում աջակցություն
Փաստաբան կամ իրավաբան

Էջ 20` 20-ից

Մենթոր

Ֆասիլիտատոր

Այլ ծառայություններ

[Մենթ ցանկանում եք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք լրացրեք հետևյալ հարցումը մեր հրապարակումների վերաբերյալ և հայտնեք ձեր կարծիքը մեր գործունեության վերաբերյալ:
<https://docs.google.com/forms/d/1d6ezTI2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>](https://docs.google.com/forms/d/1d6ezTI2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1)

«Համանդամություն ունեցող անձանց իրավունքներ - Կալիֆոռնիա»-ն ֆինանսավորվում է մի շարք աղբյուրներից: Ֆինանսավորման աղբյուրների ամբողջական ցանկի համար տե՛ս <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.